

ՎԻՇԱՊԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐՈՒՆ ՄԷՉ

(ՆԱԵՒ ՓԻԻՆԻԿ ԵՒ ԱՐԾԻԻ)

Անահիտի մէջ՝ հրատարակած «Գորգա- շինութիւնը Հայոց մէջ», ուսումնասիրու- թեանս ընթացքին ակնարկութիւններ ըրած էի Հայկական գորգերու գծագրութեանց Վիշապի եւ Վիշապաձեւերու մասին: Նկատի առած վկայութիւններէս նշանակելի է (Արմենակ Սաղաքեանի) «Հայկական գոր- գերը»² աշխատութենէն սա հատուածիկը: «Երբ Վիշապի խօսք կ'ըլլայ, ենթադրու- թիւն մըն է այդ» եւ ալ իմ կարգիս Mr. Arthur Upham Popeի տուած պատասխանիս մէջ՝ կը գրէի «Հայկական Վիշապ գորգերը ունին գծաձեւեր որոնք Վիշապներու կը նմանին (վտահ չենք թէ որոշ կերպով են)»: Այն ատեն խըն- ղրոյն վրայ ծանրանալու նպատակ չու- նենալով՝ հարեւանցի արտայայտուելով կ'անցնէի. իսկ այժմ միջամուխ կ'ըլլամ այս կարեւոր խնդրոյն՝ վերջնականապէս զայն որոշ դիրքի մը վրայ դնել կարենալու համար, եւ ցոյց տալու համար թէ Հայ- կական Վիշապ գորգերուն գծագրութիւն- ները իրապէս Վիշապի գաղափարէն եւ նպատակով են: Աւելցընելով անշուշտ որ մեզի ծանօթ վիշապաձեւ գծագրութեամբ գորգերը Հայկական են: Անոնց խմբաւո- բումը եւ զատակարգումը որ կարեւոր է՝ նիւթէս անշատ ըլլալով ուրիշ մօտաւոր առթիւ մը նկատի պիտի առնեմ:

Ինծի ծանօթ հեղինակութիւններ տա- րակոյս չունին Վիշապ գորգերուն վիշա- պաձեւ գծագրութեանց Վիշապ ըլլալուն մասին, եւ սակայն անոնց մօտ խնդրին խորութիւնը չէ չափուած եւ ոչ ալ այդ- պէս ըլլալու պատճառը կամ պատճառները

նկատի առնուած են: W. A. Hawley կ'ըսէ թէ ինք անոնց, վիշապ գորգերուն մէջ, կը տեսնէ «գծագրութիւններ մեծղի ծաղիկներու եւ վիշապներու»³: Dr. F. R. Martinի կարծիքն ալ ասկէ չի տար- բերիր. նոյն գաղափարը կը պահէ նաեւ Mr. A. U. Pope եւ ուրիշներ, թէեւ ամէնքն ալ իրարմէ քիչ տարբերելով այդ վիշապին ներշնչման աղբիւրի մասին: Մեծագոյն մաս մը այս հեղինակներէն Հայկական Վիշապ գորգերու գծաձեւերը եւ Վիշապը կը տանին Չինական կամ Կեղերոնական Ասիոյ երկիրները, եւ հոն կ'երեւակայեն անոնց սկզբնավայրը, կարծե- ծելով որ միջին դարերուն կամ գուցէ փ- դարէն առաջ իսկ, Վիշապը (ըստ ոմանց Պարսից միջնորդութեամբ) եկաւ գրաւել խնդրոյ առարկայ իր տեղը՝ Հայկական Վիշապ գորգերուն մէջ: Ես համամիտ չեմ այս քիչ մը շատ եւ միայն երեւակա- յութեամբ յեղեղուած տեսականին. պիտի ցոյց տամ իմ համոզումներուս աղբիւր- ները եւ փաստերը, մանաւանդ ցոյց պիտի տամ թէ Վիշապին գոյութիւնը ի Հայս, գրեթէ նախահայկական եւ նախապատ- մական շրջաններուն իսկ գոյութիւն ունէր՝ այժմ Հայաստան կոչուած այս հողամա- սին վրայ: Անշուշտ կարելի է խնդրոյ նիւթ ընել Վիշապին բուն նախահայրեւ նիւթը, եւ սակայն զժուար թէ կարենանք

1. Անահիտ, նոր շրջան Բ. տարի Թիւ 3 եւ 5-6:
2. Դանթ, նոր շրջան, Կ. Պոլիս, Թիւ 36 (1919).
3. Հայկական վիշապ գորգերը պատասխան են: — Պա- տասխան Mr. A. U. Popeի. Բազմալեզու 1930 էջ 416.
4. Oriental Rugs. New York, 1927, էջ 91.

(Շարունակելի) ԱՐՇԱԿ ՍՍՅՐԱՍՏԵԱՆ

1. Fri. Delitzsch. Wo lag Babylon? 1882. էջ 162-68: — 2. Fritz Hommel. Ethnologie und Geographie des alten Orients. Գ. տպ. 1926. հատուած 14: — 3. C. J. Gadd und L. Legrain. Անգլ. էջ 75: — 4. E. Landsberger. Zeitschrift für Assyriologie. (N. F.) I. էջ 228-230:

Միջագետքէն հիւսիս եւ հիւսիս-արեւ- մուտք տարածուող աշխարհամասի վերա- բերմամբ: Անգղիական — Ամերիկեան այս նորագոյն հրատարակութիւնները նոյն լոյ- սով կը հաստատեն ինչ որ Ֆրիտրիխ Գէ- լիչ¹ ու Ֆ. Հոմմել² ենթադրած էին մի սերունդ առաջ: Այդ մարզի բնակիչները իրենց երկրանունէն կ'առնեն Սուբար- եանց անունը (Անգլ. Subarean, Գերմ. Subaräer): Սակայն Սուբարու, ինչպէս Միտաննի, մի ցեղային ամբողջութիւն լի- նելէ աւելի մի քաղաքական անուանակո- չութիւն էր, եւ Սուբերացիների կողմէ սո- վորարար հակադրուած Էլամին թէ՛ անոնց քաղաքական աշխարհագրութեան եւ թէ հետագայ աստղաբաշխական բառախօսու- թեան մէջ: Ինչպէս որ Էլամ կը տարա- ծուէր մինչեւ Բարախշէ, այնպէս ալ Սու- բարու կը տարածուէր մինչեւ մայրի ծառերի անտառը, եւ բնականաբար յիշե- լով Հին Կտակարանի ակնարկութիւնը Լի- բանանի մայրիների մասին, Գազ եւ Լըզըն Սուբարու կը տանին դէպ ի Սիւրիա³. Լան- դաբէրգը⁴ կը կարծէ որ Գ. հազարամ- եակին Բ. Ա. Սուբարու տեղանունը կը կիրարկուէր Տիգրիսէն Արեւելք գտնուող շրջանին, թէեւ Գազ յառաջ կը բերէ Սար- գոնի մէկ ակնարկութիւնը «Մայրի — Է- րան» մասին որպէս նոյնացուած Ամա- նոսի հետ: Դատ անգամներ երկար խօսած եմ Gadd-ի հետ այս հարցերի մասին: Երբ ըսի որ 2000 տարի Բ. Ա. Տօրոսն եւ ձիւտի տաղը հաւանաբար նոյնչափ «մայրի անտառներ էին» որչափ Երբա- յական Լիբանանը. նա պատասխանեց որ խնդիրը դեռ լաւ ուսումնասիրած չէ:

Այստեղ կարգին է մի անգամ եւս կրկնել որ այս կարգի տառնեակներով «խնդիրներ կան որ լաւ ուսումնասիրուած չեն», եւ սակայն յաճախ այնպէս կը խմբագրուին Արեւմուտքի գիտնականների կողմէ որ միամիտ ընթերցողին կը ներկայանան որ- պէս անվիճելի գիտական իրողութիւններ:

Լեզուաբաններին կը մնայ կատարել մի խորունկ ուսումնասիրութիւն ստուգելու թէ ձայնային օրէնքների ու Satem լե-

առ այժմ այդքան ետ երթալ, եւ հազարաւոր տարիներու հնութիւնը թօթափելով ըսել թէ Վիշապը մեր հողամասին մէջ ներմուծուած է Չինաստանէն կամ Կեղրունական Ասիայէն: Վիշապը գաղափար մըն է, տեսակէտի մը մարմնացումը, կատարուած կրօնից շնորհիւ. այդ պայմաններուն տակ դժուար է անոր բնաշխարհը ցոյց տալ: Իսկ ներկայիս անոր ինքնութեան ճշգրտութիւնը չենք գիտեր: Եւ անոր յետոյ չենք տեսներ քանի որ ան ուրիշ ուսումնասիրութեան նիւթ կը կազմէ:

Վիշապին որոշ պատմական գոյութիւնը ի Հայաստան Քրիստոսէ 714 տարի առաջ փաստացիօրէն կը յիշուի, ցուցնելով անոր դիրքը, արժէքը եւ պաշտօնը: Այս թուականին Ասորեստանի Սարգոն արքան եկաւ Ուրարտուի վրայ, ուրկէ ձեռք անցուցած թանկագին եւ ճոխ աւարին ցանկը քանդակեց բեւեռագիր. այդ ցանկին մէջ կը կարդանք թէ, բազմատեսակ աւարին կարգին կար նաեւ «ոսկեծոյլ կերպը Ապուպուբի (abubu) կամ ջրհեղեղի-վիշապին, մարդու ձեռքի մը վրայ նստած, ասիկա կը փակէր դուռը, ուրիշ երկու ոսկի բանալիներու հետ, որոնք Հիթիթ աստուածուհիներու գլխու պահպանակներուն պէս ձուլուած էին: Տաճարէն առնուած ուրիշ աւարներու հետ միասին կային նաեւ 12 արծաթ վահաններ զարդարուած առիւծի եւ վայրի ցուլի գլուխներով, նաեւ Ապուպուբի¹: Նախ աւելցնենք որ գրաւուած տաճարը Խալտիսի տաճարն էր: Խալտիսի գաղան գերագոյն աստուածուհին, մայրութեան, բեղմնաւորութեան, զգաստութեան, շատ ու շատ կը նմանի Անահիտին, եւ անտարակոյս պէտք է զանոնք նոյնացնենք: Այս վերջին կէտը կը խընդրեմ որ լաւ պահուի յիշողութեան մէջ: 12 արծաթ վահաններուն վրայ կար ցուլ ուժի, առնականութեան մարմնացումը որ Խալտիսի տաճարին նման Անահիտայ տաճարին ալ զարդն էր: Անահիտ, ոսկեծոյլ, ոսկեմօր, թէեւ կոյս, բեղմնաւորութեան աստուածուհիին՝ ճակատին կոնաձեւ իսարանուած ցուլեր կը զոհաբերուէին, ասիկա

է յիշուած միակ կենդանիի, եւ արիւնի զոհաբերութիւնը որ նուիրուած է այդ աստուածուհիին, որ մինչեւ Քրիստոսի Գալիլէ շարունակուեցաւ Եկեղեցի գաւառի Երիզայի Անահիտական մեհեաններուն, եւ անկէ վերջ ալ Քրիստոնէութեան մէջ այդ զոհաբերական սովորութիւնն եւ անոր իսկութիւնը աղաւաղուելով իր հետքը թողուց մատաղին մէջ:

Վահաններուն վրայի Առիւծը Արիական էր: Գալով Վիշապին «Չինական ջրհեղեղի-վիշապին համանաչափ կերպաւորութիւն մը» էր եւ ոչ քե Չինական ջրհեղեղի վիշապը:

Դառնալով պատմականին կը տեսնեմ թէ Խորենացին ունի նշանակալից «ի Տաճարին Վիշապաց», Արգաւանի ճաշի երգին մէջ, որ ըստ իս Խալտիսի տաճարին կ'ակնարկէ ուր կարելի էր մտնել Վիշապազարդ բանալիներով, նաեւ ուր վահանները զարդարուած էին Վիշապով: Վիշապը ջուրի, արգասաւորութեան, բեղմնաւորութեան, որով մայրութեան օժանդակ աստուածութիւն մըն էր, անոր, մայրութեան տաճարին դռները բացող, զայն իր վահանով պաշտպանող, օժանդակող: Ես միայն Խորենացույ մօտ հանդիպած եմ, ուր՝ այս բզիկ բզիկ եղած մատենագիրը՝ ստէպ կը յիշէ Աժդահակը, աւելցնելով որ «Աժդահակ ի մեր լեզու է Վիշապ»²:

Ափյափոյ եղած վճիռներ կան Վիշապին մասին, մերայնոց մօտ: «Վիշապը Հնդկաստանէն արեւելեան երկիրներու եւ հին Հայաստանի մէջ մուտք գտած ըլլալ կը թուի, որովհետեւ ան Հնդկական վաղեմի դրօշի նշանն է. Վիշապը մեր մէջ Վաղարշակի օրով մուտք գտած ըլլալ կը կարծէ Չինոր՝ պատմիչներէն: Անոր քանդակները գտնուած են Երզնկայի մէջ: Մեր Ուրարտացի նախահայրերուն Վիշապը երախարաց եօթը գլուխ ունէր, եւ կը խորհրդանշէր եօթը հզօր նահանգները»³:

1. Իմ. Բազմափեպ 1928 էջ 283: Վ. անի թագաւորութիւնը. Թարգ. Անգլ.: — 2. Խորենացի, Գ. Ա. ԳԼ. I. — 3. Օ. Գ. Գալուստեան, Հայկական Գրօշակի հարցը: Թէոքիկ 1923, էջ 184:

Ես ոչ Եօթ գլխով վիշապի, եւ ոչ ալ իր իմաստին պատմական փաստերուն հանդիպած եմ Ուրարտական ուսումնասիրութեանց մէջ: Իսկ Վիշապին Հնդկաստանէն եկած ըլլալուն համար, ոչ փաստ կայ եւ ոչ ալ ապացոյց, եւ Վիշապը կըրնայ Հնդկական վաղեմի դրօշին իբր նշան զործածուած ըլլալ՝ առանց անոր Հայկական աստուածութիւն մը, եւ շատ հին ըլլալուն արգելք դառնալու: Գալով Վաղարշակ Ա.ի, կ'ակնարկուի որ թագաւորեց 149-127 (Ք. ա.), բայց մենք արդէն տեսանք որ Քրիստոսէ 714 տարի առաջ Վիշապը կար եւ կը պաշտուէր Ուրարտուի, որով Հայաստանի մէջ: Իսկ Երզնկայի մէջ գտնուած Վիշապի քանդակները հաճելի նորութիւն մը եղան ինծի: Ատիկա դիւրաւ կը բացատրուի եթէ նկատի առնենք որ Անահիտ Մայր աստուածուհիին ամենէն համբաւաւոր մեհեանը (աշխարհի մէջ) կը գտնուէր հոն, իմ հայրենի եւ մայրենի գաւառիս մէջ:

Վիշապապաշտութիւնը Քրիստոնէութեանէն առաջ Հայաստանի եւ Հայոցս մէջ բարի եւ բարձր նկարագիրը ունէր: Քրիստոնէութիւնը չկրցաւ ջնջել զայդ, այլ հակադրեց եւ շրջեց զայն չարի, այսու հանդերձ (ինչպէս որ պիտի տեսնենք) ժողովրդեան խուլ եւ անխառն ծաւրերուն մէջ պահեց՝ անգիտակից՝ բարին: Մ. Մինասեան կը գրէր. «Ես Վիշապապաշտութեան ալ անխզելի կապակցութիւնը ցոյց տուած եմ մայրապաշտութեան հետ, եւ ճորոխի Աւագանին եւ Արարատեան հովիտներուն մէջէն վերջերս գտնուած բազմաթիւ Քարէ վիշապներուն ներկայութիւնը իբր ապացոյց յիշած եմ այն իրականութեան թէ նոյն իսկ նոր Քարէ դարուն Ք. Ա. հինգերորդ հազարամեակին, երբ ամենայն հաւանականութեամբ Սումերացիք դեռ իջած չէին Բաբելաստան, Հայաստանի մէջ արդէն կը տիրէր մայրապաշտական եւ վիշապապաշտական կրօնը»¹: Անշուշտ շատ պիտի երկարէր ուսումնասիրութիւնս եթէ աշխատէի այս ուղղութեամբ, ստիպուելով



Kaiser Friedrich Museum, Berlin

Փորը Ասիոյ գորգ՝ Վիշապ-Փիւնիկ

երեւակայել Ք. Ա. հինգերորդ հազարամեակին, ասկէ 7,000 տարի առաջուան ինդիւրները, բայց Մինասեանի վերի տողերը ամփոփումն են եզրակացութեանց որոնց գաղափարը հաւասարաբար իրեն հետ կը բաժնեմ:

Վիշապը եւ օձը անտարակոյս տարբեր են իրարմէ, սակայն դժբախտաբար նոյնացուած. ասիկա կրնայ դուռ բանալ շատ մը ժխտումներու, յեցած մասնագիտական բացատրութեանց վրայ, որուն հոս չեմ կրնար ձեռք զարնել, միայն յիշեցնելով որ վիշապը եւ օձը նոյնը չեն կրնար ըլլալ, առաջինը ըլլալով բարի եւ երեւակայական, իսկ երկրորդը իրական ու չար: Այսու հանդերձ առանց այս խնդրին միջամուխ ըլլալու եւ այս երկուքին իրապէս

1. Հ. Կոլմակ, 1927, էջ 651:



Ballard Collection — The Metropolitan Museum of Art of New-York

Հայկական գորգ (Դար ԺԷ) ուր վիշապը կը մշմարտի յառաջացած գծածներու մէջ (Տե՛ս մահւ թղթիկը. 1931, Մարտ)։

իրենց աւանդուած կերպով ստանալով արծազանգ կ'ըլլամ տուեալներուն։ Հայաստանի մէջ օձ եւ վիշապ անուամբ տեղերու, գիւղերու, լեռներու, ուխտատեղիներու եւայլն զարմանալի առատութեամբ մը կը հանդիպինք։ Առ այս ակնարկ մը նետել մեր տեղեկագրական մատենագրութեան վրայ, եւ կը բաւէ։ Աւանդութիւն, հաւատալիք նոյնպէս առատօրէն ունինք մեր ազգագրութեան մէջ։ Եկեղեցաց գաւառին մէջ ինծի հաւատացուցած էին որ օձի շապիկը եթէ բարձին տակ դրուի քնարեր է, եւ մանկական ջերմեռանդութեամբ Երզնկայի լեռներուն ժայռաձեղքերուն մէջ կը փնտռէի օձի շապիկը։ Որոշ իմացած եմ որ տան օձը սպաննելը

անբախտութիւն է։ Առ այս կարեւոր ազգագրական նիւթ կը ներկայացընէ Հայկ Աճէմեան, «Ծանօթ է ինձ... Մեր ժողովրդական գրոյցներու մէջ սակայն օձը կը համարուի տան մը, օջախի մը առատութեան, խէր-բարաքեաթի նշանաբանը, օձը՝ նշան իմաստութեան, խոհականութեան, որոնք մարմնաւորող սողունը դարձեր էր պաշտամունքի առարկայ։ Բերեմ ժողովրդական վկայութիւններ, որոնց վաղուց ի վեր ծանօթ եմ»։

«Այս վկայութիւնները բուն իսկ Հայկական են։ Հայ գեղջուկի մը տան խէր-բարաքեաթը օձ մըն էր, որ կ'ապրէր թոնտրատան մէկ անկիւնի մէջ բացուած ծակում։ Օձը ամէն օր ազատ կերպով կ'երթեւեկէր տան մէջ եւ իրեն ուտելիք կը ճարէր ազատ համարձակ։ Տանտէրը — Հայ գիւղացին — այդ օձի վրայ մեծ համարում ունէր եւ կ'ընդունէր որ իւր տան առատութեան եւ շինութեան պատճառը օձն էր, որուն յատուկ խնամք ու յարգանք կ'ընծայէր»։

«Օրին մէկը տան փոքրիկ երախան ուրազը ձեռքին կը խաղար տան մէջ, երբ օձը իւր սովորականին պէս եկաւ անցաւ։ Տղան վերցուց ուրազը եւ ուժգին հարուածով մը կտրեց օձին պոչը խորունկէն։ Զայրացաւ օձը եւ թունաւորեց փոքրիկի ոտը։ Ժամանակ մը յետոյ տղան մեռաւ, մինչ օձն ալ արդէն վշտացած փախեր էր տունէն։ Գիւղացու բախար շուռ եկաւ, տունը կորսնցուց իւր շէնութիւնը։ Աղբատութիւնն ու ծախորդութիւնը տան սեմէն ներս կոխեցին։ Օր մը գիւղացին մահակը ձեռքին ելաւ լեռը (իրենց տան կողքին) եւ կանչեց. «Այ օձ, ո՛ւր ես, արի՛, արի՛ մեր տուն, ես մոռացեր եմ տղիս մահը, դու ալ մոռցիր քո պոչը, արի՛ նորէն մեր տան մէջ ապրէ եւ շէնցուր իմ օջախը»։

«Վշտացած օձը քարերու մէջէն տխրածայն պատասխանեց գիւղացուն. — «Այ գիւղացի ախպէրս, ես այլեւս չեմ գար քո տուն, որովհետեւ դու պիտի միշտ քո զաւկի մահը յիշես, ես ալ իմ կտրած պոչը եւ մեր երկուքի միջեւ այլեւս հաշ-

տութիւն չը պիտի ըլլայ»։ Գիւղացին յուսահատ գնաց եւ այն օրէն դարձաւ օձին թշնամի, որտեղ որ օձ տեսնար կը հալածէր, կ'անիծէր։ Այս առիւթիւնը օձի հանդէպ սերունդէ սերունդ անցաւ եւ հասաւ մինչեւ մեր օրերը։ Օձերը, սակայն ցարդ կը համարուին, ժողովրդի մէջ, իբրեւ իմաստութեան մարմնացում»։

«Անձնական դէպք մը, որ ինձ հետ պատահեցաւ 1921 թուին մայիսին, Արազած լեռան վրայ։ Զրադացի մը մէջ նստեր էինք չորս հոգով, երբ յանկարծ օձ մը ալիւրի ամբարը մտաւ եւ սկսեց ալիւր ուտել։ Ես փայտը շարժեցի եւ օձը փախաւ։ Այս թրարքիս համար ջրադացաւնը յանդիմանեց ինձ»։

«Այ ախպէր, դու խի՛ օձին հալածեմ ես, օձի վրէն փէտ չին քաշի, էտ օձը մեր ջրադացի պահապաննա, մեր խէր բարաքեաթը դրա սայից է (շնորհիւ), եթէ աջըզ (սրդողի) անի գնա, բաներըս խաւապ ա՛ հա՛»։

«Օձի մասին կան բազմաթիւ ժողովրդական առածներ, որոնք մտադիր եմ կարգի բերել եւ... վիշապի մասին. — երբոր վանի ծովը լեռնակուտակ ալիքներով կ'աղմկէր՝ ժողովուրդը կ'ըսէր թէ վիշապները ծովէն ելան քաշուեցան երկինքը։ Իսկ երկինքը երբ ամպէր եւ մանաւանդ գոգոտար՝ կ'ըսէին վիշապներն իջան ծովը»¹։ Հին դարերէն հասած փաստեր ալ կան. «Յովհանն Օձնեցի շինէ եկեղեցի մի կան. «Յովհանն Օձնեցի շինէ եկեղեցի մի մեծ յիւր գիւղն Ուձուն, որ հուպ էր ի քաղաքն Լօռէ, եւ իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ կութեան սակաւ մի ի բացեայ ի գիւղէն՝ եւ անդ դադարէր։ Եւ եղեւ օր մի զի յաշօթս էր սուրբն, երկու վիշապը ահագինք երեւեցան ի տեղիքն ուր կայանքն էին առաքինւոյն, եւ տեսեալ պաշտօնէի նորա՝ աղաղակեաց առ սուրբն օգնել. իսկ սուրբն կնքեաց ընդդէմ նոցա, եւ առժամայն քաւացան, եւ են մինչեւ ցայսօր, եւ ջուր բղխեաց ի պորտոյ վիշապին (վիշապացն) եւ բժշկութիւն է ամենայն օձահարի»²։ Հոս որոշ կ'երեւայ նախաբրիտոնէական վիշապական ուխտատեղի մը որ Յովհան

Օձնեցիի վերագրուած հրաշքով մը Հայքիստոնէական եկեղեցին բրիտոնէացուցած է։ Նշանակելի է վիշապին ջրատու ըլլալն ի պորտոյ։

Արդ կէտիս վրայ իբր վերջնական անշարժարձում համամիտ եմ որ «մեր բնիկ նախնեաց ամենահին այս կրօնին մէջ՝ Օձը կամ Վիշապը անրաժան ընկերը կը հանդիսանար Մայր — Աստուածուհւոյն՝ իբր տիեզերական ուժի եւ օրհնութեանց անսպառ աղբիւր խորհրդանշող սրբազան էակ մը։ Խիստ հաւանօրէն գետերու Օձապտոյտ հոսանքներն էին թելադրած այս զուգորդութիւնը Օձին եւ ջուրին միջեւ»³։ Ասիկա ընդունելի մեկնութիւն մը չեմ նկատեր։ Որթատունկին, գալարուն կազմութիւնէն կարելի է որ Հայկական հիւսկեզարդը ստեղծագործուէր, ինչպէս կը հաւատամ. սակայն գետէն ստեղծել Օձապաշտութիւն, ասիկա ճարտար եւ սակայն ոչ ճիշտ կը նկատեմ. թող որ Օձապաշտութիւնը չէ որ գոյութիւն ունեցած է մայրապաշտութեան առնթեր, այլ վիշապապաշտութիւնը։

Վիշապապաշտութեան դէմ Արիականութիւնը եւ Սեմականութիւնը մղած են բուն պայքար։ Ինչպէս ըսի, ես ալ համոզուած եմ որ «ինչ որ ալ եղած ըլլայ սկզբնական զրգապատճառը՝ Օձը կամ Վիշապը ամենախորունկ յարգանաց զիրք մը կը գրաւէր բնիկ Հայոց նախնական կրօնին մէջ, իբրեւ ներկայացուցիչն ու խորհրդանշիչը հողային արդիւնաբերութեանց պարգեւաբաշխ տիեզերական հոգւոյն կամ գերագոյն աստուածութեան»⁴։ Եւ սակայն ինչպէս ըսի նախ՝ Արիական կրօնքն ու ազգեցութիւնը, յետոյ ալ՝ Սեմական (վերջը Բրիտոնէական կերպարանքով) ազգեցութիւնը եկան 2500 տարիներու անդադրում ճիգով շրջել այդ ամէնը։ «Հին հեթանոսական կրօններուն մէջ ընկերային բարիք կը համարուէր վիշապներու

1. Լոյս. Պետրէյ Գալիֆորնիա 1927 թիւ 1 էջ 34-35.

2. Կիրակոս. Պատմ. էջ 30.

3, 4. Լոյս. 1927 թիւ 1, էջ 33. — Մ. Միստահան «Օձը աղբիւր ամենայն բարեաց».

սպանութիւնը, ըլլայ Հերակլէսով, ըլլայ Վահագնով»¹ կը գրէ Ե(ղիշէ) Ե(պիսկոպոս) Դ(ուրեան): Իրապէս կը յիշուի Վիշապաքաղ Վահագն, Հելլէններու Հերակլէսին համահաւասար, եւ սակայն սրբազանը պէտք է զիտնար որ երկուքն ալ (Հերակլէս եւ Վահագն) Արիական աստուածութիւններ էին, ներմուծուած ի Հայս հաւանաբար Քրիստոսէ հինգ հարիւր տարիներ առաջ: Եւ «Հայաստանի մէջ, Քրիստոսէ առաջ, երկու հազար տարիներէ ի վեր մինչեւ այսօր, մեր եկամուտ Արիական նախնեաց ազգեցութեամբ, եւ յետոյ ալ Քրիստոնէութեան միջոցաւ Սատանային, Փորձիչին, մարդկային կեանքը անէծքի ու դաժնութեան ենթարկող Չար Ոգոյն»²: Առ այս կ'ուզեմ յիշեցնել Ազամ եւ Եւայի օձին սեմական աւանդութիւնը: Թէեւ օձին պաշտամունքը սեմական կրօնքին Մովսիսականութեան սկիզբն իսկ կը յիշուի, երբ Մովսէս անապատին մէջ օձազարդ խաչ մը կանգնեց, հրեայ օձահարները փրկելու, սակայն հոն չեն հանդիպիր Վիշապապաշտութեան կամ Վիշապին մասին յիշատակութեան կամ ակնարկութեան: Ասիկա կը սահմանաւորէ Վիշապը օձէն: «Վաչկատուն խաշնարած

ժողովրդոց մէջ, կեանքի գերագոյն շահեկանութիւնը կը դառնար կռիւի ու յափըշտակութեան շուրջ: Եւ պատերազմի ու զօրաց Աստուածն էր անոր պաշտպան գերագոյն առարկան: Այսպիսի կրօններու մէջ շատ ստոր դիրք մը կը գրաւէին կին աստուածութիւնը, եւ օձն ու Վիշապն ալ կը համարուէին իբր ներկայացուցիչներն ու խորհրդանշները Չարին, Սատանային, Փորձիչին: Այսպիսի չարահամբաւ էակ մըն էր օձը՝ Սեմական ու Հնդեւրոպական կամ Արիական ծագում ունեցող բոլոր կրօններու մէջ»³:

Այսպէս տեղի ունեցաւ յեղաշրջումը Վիշապին (օձն ալ խառնուած) բարիէն դէպ ի չար. յեղաշրջում մը որ միայն կրօնական մարգերուն մէջ չմնաց այլ գեղարուեստի, մշակոյթի, արհեստի մէջ ալ ունեցաւ իր յեղաշրջական ընթացքը, միայն թէ տեղ տեղ աւելի կամ նուազ արագութեամբ կամ դանդաղութեամբ, աւելի կամ նուազ կատարելութեամբ կամ յաջողութեամբ, արհեստին ունեցած գիրքին համաձայն (յեղաշրջող կրօնքին հանդէպ), անոր ընթացքին համեմատ:

(Շարունակելի)

Յ. ՔԻՐՈՍՏԵԱՆ

1. Սիոն - Երուսաղէմ - Սուրբերն ու Անաստաները: Ե. Ե. Դ. - 1928 էջ 152:

2. Լոյս, 1927, թիւ 1 էջ 33:

3. Անդ: Հոս անցողակի աւելցնել կ'ուզեմ որ հիւսիսային Ամերիկայի հնագոյն քաղաքակրթութեանց (հին հնդիկ - մալայեան) մեծապէս յառաջացած ու զարգացած մշակոյթին եւ կրօնքին մէջ թեւաւոր օձ մը կամ փետրաւոր օձ մը - Վիշապ մը կը պարզուի իբր ջուրի, ան-

ձրի աստուածութիւն: Հին հնութեանց միացորդներուն մէջ տաճարներ կան որոնց վրայ քանդակուած է վիշապաձեւ աստուածութիւն: Իմ ճամբորդած ներքին նահանգներուն (Նիւ Մեքսիկոյ, Արիզոնա, Քոլորադոյ) մէջ հանդիպած իմ կարմրամորթ հնդիկ չօրի կոչուած ցեղին որ կը պաշտէ օձ - սողուն փետրաւոր թռչող՝ անձրեւի, ջուրի աստուածութիւն մը:

Ա.Գ.Ա.Թ.Ա.Ն.Գ.Ե.Ղ.ՈՍ ԵՒ Ե.Ղ.ԻՇԷ (ՁԵՌԱԳԻՐ)

Նոր Զուգայէն՝ ծանօթ զրազէտ-դաստիարակ Յ. Տէր Զակարեան խմբագրութեանս ուղղած է Ազաթանգեղոսի եւ Եղիշէի պատմութեան ձեւագրի մը մասին հետեւեալ տեղեկութիւնները, որոնք յատուկ շահեկանութիւն ունենալով մեր բանասէրներուն կը հրատարակեն հոս, աւելցնելով միանգամայն կարեւոր պարագայ մը, որ մեր նոյն բարեկամը կը շեշտէ իր մէկ նամակին մէջ. «Նոր Զուգայում մասնաւոր մարդկանց մօտ գտնուում են բաւական թւով զրազեր, որոնք կամ անյայտութեան մէջ են մնում եւ կամ վաճառուած են շահամոլ հրեաներէն եւ վերջ ի վերջոյ կորչում»: Այս կէտը անշուշտ անշուշտ պիտի չանցնի, եւ ամէն հայ՝ խղճի պարտականութիւն մը պիտի անշուշտ անշուշտ ընկնուի կորուստէ փրկելու համար մեր հնութեան թանկագին նշխար-զգայ հնարաւորն ընկնուի կորուստէ փրկելու համար մեր հնութեան թանկագին նշխարները որոնք իրենց կարգին կարող են ուսումնասիրութեան նոր աղբիւրներ դառնալ եւ լոյս սփռել բնագիւններու մեկնութեան կարօտ կէտերու վրայ:

ԾԱՆ. ԽՄԲ.

Նիւթը՝ թուղթ, շատ մաքուր. գրած-ըը՝ մանր նօտրագիր եւ շատ մաքուր ու գեղեցիկ: Կազմը՝ տախտակ, վրան կաշի, իսկ ներսի կողմից՝ հին գեղեցիկ շոր, սպիտակ եւ սեւ շերտերով: Սկզբից եւ վերջից երկ-երկու թերթ պահպանակ, մազաղաթ, խոշոր երկաթագիր: Սկզբի պահպանակները ինչ որ մէկ պատմութիւնից է «Հռափայեան երկրի»ն «Հռափայինը» նեն Զումինս»¹: Վերջին պահպանակները Աւետարանից են եւ սկսում են. «Ձի ցցի գիրն որ ասէ բաժանեցին զհանգերծս իմ յիւրեանս եւ ի վերայ պատմուհանի իմոյ վիճակ արկանէին»:

Ամբողջ ձեւագիրն է, առանց պահպանակների, 567 երես: Գրքի ծաւալն է 21×16, իսկ զրութեանը՝ 15×11: Գրւած է երկսիւն, երկու սիւնակների մէջը կարմիր զոյգ գծերով լուսանցք. երեսի երկու կողմերից, աջ ու ձախ, ունի նոյնպէս լուսանցքներ:

Սկզբնատառերը գեղեցիկ, գունաւոր ծաղկազեր են: Գրքի գլուխների սկզբում կան գեղեցիկ գունաւոր խորաններ, կող-

բերին, լուսանցքներում զարդանկարներ: Պարբերութիւնները շատ յաճախ սկսում են կարմիր թանաքով:

Գրւած է ՌՃԽԶ (1697) թին, Աստապատում: Գրիչն է՝ «անպիտան եւ անարհեստ գրիչ Սարգիս»: Ստացողն է «Յովսէփ աստուածաբան վարդապետ»: Ունի մի քանի յիշատակարաններ: Գիրքը լրիւ է եւ ոչ մէկ թերթ փճացած կամ կորած:

«Ազաթանգեղոս»ը բռնում է 1-287 երեսի Ա. սիւնակի կէսը: Սկսում է մէկ գեղեցիկ խորանով, որի տակը կարմիր թանաքով գրւած է. «Ազաթանկեղ օգնեալսն քն: Աճ իմ եւ չոր ի գործս բարին՝ Առաջնորդեալ Ամէն»:

Այնուհետեւ խոշոր թռչնազրերով գալիս է. «Իդճ բաղձացեալք ցանկալեացն զկամս նաւելոցն» եւն:

287 երեսի Ա. սիւնակի կէսից սկսում է առաջին յիշատակարանը եւ շարունակում է մինչեւ 288 եր. Ա. սիւնակը (7 տող): Յիշատակարանն է (կարմիր թանաքով է սկսում Փ.ն թռչնագիր).

1. Տե՛ս Բ. Օրինաց գրքին մէջ Ռաֆայիկը — Զում. գումինք. զԼ. Բ. 20 եւն:

Ծ. Բ.